ՇՈՒԿԱՆԵՐ ԵՎ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Մովսիսյան Մ., Մելքումյան Զ., Այվազյան Ա., Տոնոյան Ք. (2024), ՀՀ մետաղական ամրանների շուկայի զարգացման օրինաչափությունների ուսումնասիրություն, *Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ,* 3*(6),* 102-122,
DOI: 10.52174/29538114_2024.3-102
Ներկայացվել է խմբագրություն՝19.11.2024 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 05.12.2024 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 30.12.2024 թ.

ՄԱՆՈՒԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0003-0779-7000

ԶԱՐՈՒՀԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
ՀՊՏՀ միկրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0002-0473-1965

ԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ
https://orcid.org/0009-0006-1025-0013

ՔՐԻՍՏԻՆԱ ՏՈՆՈՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի հայցորդ
https://orcid.org/0009-0008-9229-2480

ՀՀ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՄՐԱՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում շինանյութերի շուկայի, մասնավորապես՝ մետաղական ամրանների ներմուծման ոլորտի համապարփակ վերլուծությանը: Աշխատանքում մանրամասնորեն ուսումնասիրվել է վերջին երկու տասնամյակում շինանյութերի ներմուծման ծավալների շարժընթացը ինչպես արժեքային,

այնպես էլ բնաիրային արտահայտությամբ: Վերլուծության շրջանակում դիտարկվել է ներմուծման աշխարհագրությունը՝ պարզելու, թե որ երկրներից են հիմնականում իրականացվում ներմուծումները, և ինչպես է փոխվել այդ հարաբերակցությունը ժամանակի ընթացքում: Բացի այդ, ոլորտի հիմնական դերակատարներին և նրանց դիրքավորումը շուկայում բացահայտելու նպատակով իրականացվել է շինանյութեր ներմուծող կազմակերպությունների շուկայական մասնաբաժինների ուսումնասիրություն, ինչպես նաև շուկայի կենտրոնացվածության աստիճանի գնահատում տնտեսական վերլուծությունում լայն տարածում ունեցող ինդեքսների կիրառմամբ: Շինանյութերի ներմուծման կառուցվածքի և առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տվել վեր հանել ոլորտում առկա խնդիրները, ինչը կարող է օգտակար լինել դրա հետագա զարգացմանը միտված միջոցառումների թիրախայնության և արդյունավետության բարձրացման համար:

Հիմնաբառեր. *մետաղական ամրաններ, ներմուծման աշխարհագրություն, շինարարություն, շուկայի կենտրոնացվածության աստիճան*

JEL: L11, L17

DOI: 10.52174/29538114_2024.3-102

Ներածություն: Հայաստանի Հանրապետությունը, լինելով փոքր տնտեսությամբ երկիր, վերջին տարիներին ակտիվորեն ներգրավվում է շինարարական և արդյունաբերական ոլորտների զարգացման գործընթացներում: Վերջին 25 տարվա ընթացքում ՀՀ-ում շինարարության, հատկապես բնակարանաշինարարության ոլորտում արձանագրված միտումներն իրենց ազդեցությունն են թողել շինանյութի շուկայի վրա: Այս համատեքստում, կարևորվում է ըստ ապրանքային խմբերի շինանյութի արտաքին առևտրի, հատկապես ներմուծման ծավալների ուսումնասիրությունն ըստ առանձին ապրանքատեսակների և աշխարհագրության:

Շինանյութերի, մասնավորապես՝ մետաղական ամրանների պահանջարկը բարձր է, ինչի արդյունքում երկրի ներսում չարտադրվող կամ մասամբ արտադրվող ամրանների տեսակների ներմուծումը դառնում է անհրաժեշտություն: Վերջին տարիներին Հայաստանում ամրանների շուկայում նկատվել են մի շարք փոփոխություններ: Այս փոփոխությունները պայմանավորված են ինչպես տարածաշրջանային տնտեսական ազդեցություններով, այնպես էլ ներքին արտադրական հնարավորությունների աճով: Ներկրման ծավալներն ու աշխարհագրությունը, ինչպես նաև ներմուծող ընկերությունների շուկայի մասնաբաժինների վերլուծությունը կարևոր նշանակություն ունեն շուկայի կառուցվածքի և մրցակցային միջավայրի գնահատման տեսանկյունից: Սույն հոդվածը նպատակ ունի ուսումնասիրելու Հայաստանի Հանրապետությունում շինանյութերի, այդ թվում՝ ամրանների ներմուծման ծավալները և շարժընթացը՝ ներկայացնելով ներմուծման աշխարհագրական ուղղվածությունը, ներմուծողների մասնաբաժինները և գնահատելով շուկայի կենտրոնացվածության աստիճանը:

Գրականության ակնարկ: Սպառողների կարիքներն ու վարքագիծը հասկանալու, մրցակցային միջավայրը վերլուծելու, տնտեսական պայմանները գնահատելու, ինչպես նաև շուկայում առկա ռիսկերը նվազեցնելու նպատակով հա-

ճախ իրականացվում են որոշակի շուկաների վերլուծություններ: Դրանք հնարավորություն են տալիս մշակելու նպատակային ռազմավարություններ, հայտնաբերելու նոր շուկաներ և թիրախային հատվածներ, ինչպես նաև բարելավելու ապրանքներն ու ծառայությունները՝ օգտագործելով նորարարական հնարավորությունները:

Շինարարության ոլորտում հետազոտությունները կարևոր են տնտեսության կայուն զարգացման, նորարարական տեխնոլոգիաների ներդրման, էկոլոգիական ազդեցության նվազեցման, ինչպես նաև մրցակցային միջավայրի բարելավման տեսանկյունից: Դրանք հնարավորություն են տալիս արդյունավետ կառավարելու ռեսուրսները, խթանելու տեղական արտադրությունը և ձևավորելու զարգացումն ուղղորդող քաղաքականություններ: «Պողպատե ամրանների շուկայի վերլուծություն. աճի միտումներ և կանխատեսումներ (2024–2029)»[1] զեկույցն ուսումնասիրում է պողպատե ամրանների շուկայի չափերը՝ տարբերակելով ըստ տեսակի, վերջնական օգտագործողների և աշխարհագրական տարածաշրջանների: Ներկայացվում են շուկայի չափը և կանխատեսումները եկամուտների (մլն ԱՄՆ դոլար) կտրվածքով՝ հանգելով այն եզրակացության, որ կարճաժամկետում ենթակառուցվածքային ներդրումների աճը խթանում է պահանջարկը, թեև էժան այլընտրանքի առկայությունը կարող է սահմանափակել շուկայի զարգացումը: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զարգացող երկրներում ենթակառուցվածքների ընդլայնումը զգալի հնարավորություններ է ստեղծում, իսկ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը շարունակում է գերակշռել շուկայում խոշոր նախագծերի ներդրումների շնորհիվ: «Հայաստանի շինարարության ոլորտում ապագայի հմտությունների պահանջները»[2] հետազոտությունն ուսումնասիրում է երկրում շինարարության ոլորտի աճի միտումները, հմուտ աշխատուժի պահանջարկը և կայուն շինարարության անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով սեյսմիկ խոցելիությունն ու բնապահպանական առաջնահերթությունները: Վերլուծվում են ոլորտի նեղ և լայն սահմանումները, ներառյալ շինարարության ու շինանյութերի արտադրության արժեքային շղթան: Հիմնական արդյունքները ցույց են տվել, որ անհրաժեշտ է ընդլայնել վերապատրաստման ենթակառուցվածքը և ուսուցումը հասանելի դարձնել երկրի ողջ տարածքում: Պետք է վերագնահատել աշխատուժի հմտությունները և վերանայել քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման համակարգը՝ խստացնելով հմուտ աշխատուժի վերաբերյալ պահանջները և ժամանակավոր դարձնելով լիցենզավորումը:

DXR Wire Mesh-ի կողմից վերլուծությունն[3] իրականացվել է համաշխարհային, տարածաշրջանային և երկրի մակարդակներում ապրանքների, ծառայությունների, տեխնոլոգիաների, հավելվածների, վերջնական օգտագործողների և շուկայի մասնակիցների միջև: 2022 թ. իրականացված հետազոտության ընթացքում դիտարկվում էր, որ շուկան կաճի միջինը 4,4 տոկոսով և մինչև 2028 թվականը կհասնի 246,3 միլիարդ ԱՄՆ դոլարի: Առաջիկա տարիներին շուկան ունենալու էր հմուտ աշխատողների պակաս և ամրանների

[1] Տե՛ս https://www.mordorintelligence.com/industry-reports/steel-rebar-market

[2] Տե՛ս https://www.etf.europa.eu/sites/default/files/2023-02/ETF_Armenia%20construction%20sector_Country%20report_EN.pdf?destination=/taxonomy/term/354/feed%3Fsuccess

[3] Տե՛ս https://www.wireclothmesh.com/hy/news/rebar-market-to-be-worth-246-3-billion-by-2028-up-4-4-2/#

առավելությունների մասին տեղեկացվածության ցածր մակարդակ: Տեղեկատվության պատշաճ աղբյուրների բացակայությունը և համարժեք ծախսեր անելու ցանկությունը առաջիկա տարիներին նույնպես խնդիրներ էին առաջացնելու համաշխարհային շուկայի համար:

Հետազոտության մեթոդաբանություն: Մետաղական ամրանների ներմուծման ծավալները նույնականացնելու համար ընտրվել են ըստ ԱՏԳԱԱ դասակարգչի «7213 - Ձողեր տաք գլանված երկաթից կամ չորակավորած պողպատից», «7214 - Ձողեր երկաթից կամ չորակավորած պողպատից տաք գլանված՝ առանց հետագա մշակման», «7215 - Ձողեր այլ երկաթից կամ չորակավորած պողպատից» ենթախմբի ապրանքները: Ըստ այդմ՝ միավորելով երեք ծածկագրերով ապրանքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ձևավորվել են ներմուծման բնաիրային և արժեքային համարժեքները:

Հաշվի առնելով հոդվածի նպատակը և ուղղվածությունը՝ կիրառվել են նկարագրական և համեմատական վերլուծությունների մեթոդները, ինչպես նաև ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը գնահատող CR (Concentration Ratio) գործակիցը[4] և Հերֆինդալ-Հիրշմանի[5] ինդեքսները, որոնցից առաջինը շուկայի կենտրոնացվածության գնահատման տարածված ցուցանիշներից է՝ հաշվարկման պարզությամբ, իսկ երկրորդը շուկայի կենտրոնացվածության գնահատման առավել ճշգրիտ ցուցանիշներից է, քանի որ զգայուն է շուկայում սուբյեկտների մասնաբաժինների բաշխվածության նկատմամբ:

Իրականացվել է նաև հաշվարկ՝ համաձայն կենտրոնացվածության աստիճանը գնահատող երկմակարդակ սանդղակի, ըստ որի շուկաները բաժանվում են երեք խմբի.

1. կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող, երբ՝
   70%<CR-3<100%,
   2000<HHI<10000,
2. կենտրոնացվածության միջին աստիճան ունեցող, երբ՝
   45%<CR-3<70%,
   1000<HHI<2000
3. կենտրոնացվածության ցածր աստիճան ունեցող, երբ՝
   CR-3<45%; HHI<1000:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի, Պետական եկամուտների կոմիտեի և ՄԱԿ-ի առևտրային տվյալների բազայի ցուցանիշները:

Վերլուծություն: Չլինելով լայն սպառման և ոչ առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ շինանյութ համարվող ապրանքների ներմուծման ծավալներում, վերջին երկու տասնամյակների (2001–2023 թթ.) ընթացքում, պայմանավորված շինարարության ոլորտի զարգացումներով, արձանագրվել են էական փոփոխություններ և կառուցվածքային տեղաշարժեր:

---

[4] Տե՛ս https://www.investopedia.com/terms/c/concentrationratio.asp
[5] Տե՛ս https://www.investopedia.com/terms/h/hhi.asp



Գծապատկեր 1. ***Մետաղական ամրանների ներմուծման ծավալների շարժընթացը ՀՀ-ում***[6]

Գծապատկեր 1-ի տվյալների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ինչպես բնաիրային, այնպես էլ արժեքային արտահայտությամբ մետաղական ամրանների ներմուծման ծավալներում արձանագրված միտումները, ընդհանուր առմամբ, համընկնում են բնակելի շենքերի գործարկման ծավալների հետ:

Այսպես՝ 2002–2008 թթ., բնակարանաշինարարության ծավալների աճին զուգընթաց, բնաիրային արտահայտությամբ, մետաղական ամրանների ներմուծման ծավալները 2002 թ. համեմատությամբ ավելանալով տարեկան, միջին հաշվով, 27.5%-ով կամ 12.1 հազ. տոննայով, 2008 թ. կազմել են 94.5 հազ. տոննա, իսկ արժեքային արտահայտությամբ՝ 55.0%-ով կամ 14.7 մլն ԱՄՆ դոլարով և կազմել են 95.2 մլն ԱՄՆ դոլար:

2002–2008 թթ. ժամանակահատվածի բոլոր տարիներին, արժեքային արտահայտությամբ, մետաղական ամրանների ներմուծման ծավալների աճի տեմպերը գերազանցել են բնաիրային արտահայտությամբ աճի տեմպերը, ինչն էլ պայմանավորված է եղել գների առաջանցիկ աճի տեմպերով:

2009 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով բնակարանաշինարարության ծավալների անկումը 2009–2016 թթ. բոլոր տարիներին (բացառությամբ 2010 թ.) հանգեցրել է մետաղական ամրանների ներմուծման ծավալների նվազման, մասնավորապես՝ 2008 թ. համեմատությամբ տարեկան միջին բնաիրային արտահայտությամբ նվազել է 10.6%-ով և 2016 թ. կազմել 38.7 հազ. տոննա (ինչը 2008 թ. 41.0%-ն է), իսկ արժեքային արտահայտությամբ 19.6%-ով՝ կազմելով 16.8 մլն ԱՄՆ դոլար (ինչը 2008 թ. 17.6%-ն է):

2017–2023 թթ. բնակելի շենքերի գործարկման ծավալներին զուգընթաց, մետաղական ամրանների ներմուծման ծավալները բոլոր տարիներին, ինչպես բնաիրային (բացառությամբ 2021 թ.), այնպես էլ արժեքային արտահայտու-

---

[6] Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Մաքսային վիճակագրություն, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128, հեղինակային հաշվարկներ՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003–2023 թթ.» վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

թյամբ ավելացել են և 2016 թ. համեմատությամբ ավելանալով համապատասխանաբար՝ 5,0 և 6.5 անգամ, 2023 թ. կազմել են 193.7 հազ. տոննա, ինչը 2008 թ. մակարդակը գերազանցել է 2.1 անգամ, և 108.3 մլն ԱՄՆ դոլար, ինչը 2008 թ. համեմատությամբ ավելի է շուրջ 1.2 անգամ:

Դիտարկվող ժամանակաշրջանում (2002–2023 թթ.) «մետաղական ամրաններ» ապրանքային ենթախմբում «*7214 - Ձողեր երկաթից կամ չորակավորած պողպատից տաք գլանված՝ առանց հետագա մշակման*» տեսակի ամրանների ներմուծման ծավալների մասնաբաժինը տատանվել է *70–90*, «*7213 - Ձողեր տաք գլանված երկաթից կամ չորակավորած պողպատից*» տեսակի ամրաններինը՝ *15–28, իսկ* «7215 - Ձողեր այլ երկաթից կամ չորակավորած պողպատից» մասնաբաժինը՝ 0,3–10,0 տոկոսային միջակայքում:

2002–2023 թթ. ժամանակահատվածում «*7214 - Ձողեր երկաթից կամ չորակավորած պողպատից տաք գլանված՝ առանց հետագա մշակման*» տեսակի ամրանների ներմուծման ծավալների շարժընթացում արձանագրված միտումները, ընդհանուր առմամբ, համընկել են մետաղական ամրանների ներմուծման օրինաչափությունների հետ: Մասնավորապես՝ ներմուծման ծավալներն ինչպես բնաիրային, այնպես էլ արժեքային արտահայտությամբ 2002 թ. համեմատությամբ տարեցտարի, միջին հաշվով, ավելանալով համապատասխանաբար՝ 32.1 և 61.1 տոկոսային կետով, 2008-ին կազմել են 81.4 հազ. տոննա և 82.8 մլն ԱՄՆ դոլար, ինչն էլ ներմուծված ընդհանուր ամրանների 86.1 և 86.9%-ն է կազմում:



Գծապատկեր 2. ***«7214 - Ձողեր երկաթից կամ չորակավորած պողպատից տաք գլանված՝ առանց հետագա մշակման» տեսակի ամրանների ներմուծման ծավալների շարժընթացը ՀՀ-ում***[7]

Հետագա տարիներին (2009–2021 թթ.) «*7214 - Ձողեր երկաթից կամ չորակավորած պողպատից տաք գլանված՝ առանց հետագա մշակման*» տեսակի ամրանների ներմուծման ծավալներում 2008 թ. համեմատությամբ արձանագրվել են նվազման միտումներ և 2021 թ. կազմել 44.4 հազ. տոննա և 28.6

[7] Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Մաքսային վիճակագրություն, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128, հեղինակային հաշվարկներ՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003–2023 թթ.» վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

մլն ԱՄՆ դոլար, ինչը կազմել է 2008 թ. համապատասխանաբար՝ 54.6 և 34.5%-ը, այնուհետև 2022–2023 թթ. բնակելի շենքերի գործարկման ծավալներին զուգընթաց արձանագրվել է ներմուծման նշանակալի աճ, հատկապես՝ բնաիրային արտահայտությամբ, ինչի արդյունքում 2022 թ., 2008 թ. համեմատությամբ, ավելացել է 36.3 հազ. տոննայով կամ 44.6%-ով՝ կազմելով 117.7 հազ. տոննա, իսկ 2023 թ., 2022 թ. համեմատությամբ, ներմուծման ծավալն ավելացել է 42.9 հազ. տոննայով (36.5%-ով)՝ կազմելով 160.6 հազ. տոննա, որն էլ կազմել է ներմուծված ընդհանուր ամրանների 82.9%-ը:

Գծապատկեր 3-ի տվյալներից պարզ է դառնում, որ 2002–2023 թթ. ժամանակահատվածում «7213 - Ձողեր տաք գլանված երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների ներմուծման ծավալներում արձանագրված միտումները, ընդհանուր առմամբ, նույնպես համընկել են մետաղական ամրանների ներմուծման շարժընթացների հետ՝ որոշ բացառություններով: Մասնավորապես՝ 2002–2003 թթ. ներմուծման ծավալների ինչպես բնաիրային, այնպես էլ արժեքային արտահայտությամբ աճի միտումներից հետո՝ 2004–2005 թթ. արձանագրվել են նվազման միտումներ, այնուհետև բնաիրային արտահայտությամբ նորից աճելով մինչև 2010 թ., 2009 թ. կազմել է 15.8 հազ. տոննա, ինչը 2002 թ. համեմատությամբ ավելի է շուրջ 2,4 անգամ, իսկ արժեքային արտահայտությամբ ներմուծման ծավալի աճ արձանագրվել է մինչև 2009 թ. և 2008 թ. կազմել է 11.4 մլն ԱՄՆ դոլար՝ 2002 թ. ներմուծման մակարդակը գերազանցելով ավելի քան 9.4 մլն ԱՄՆ դոլարով կամ 5.7 անգամ:

Չնայած 2002–2009 թթ. «7213 - Ձողեր տաք գլանված երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների ներմուծման միտումների աճին, այնուամենայնիվ, 2002 թ. համեմատությամբ ինչպես բնաիրային, այնպես էլ արժեքային արտահայտությամբ 2009 թ. դրանց մասնաբաժինները ներմուծված ընդհանուր ամրանների մեջ նվազել են համապատասխանաբար՝ 9.8 և 9.1 տոկոսային կետերով՝ կազմելով 20.3%:

Այնուհետև, 2010–2018 թթ. ժամանակահատվածում, որոշակի տատանումներով, ամրանների այս տեսակի ներմուծման ծավալներում արձանագրվել են նվազման միտումներ և բնաիրային արտահայտությամբ 2018 թ. կազմել 7.5 հազ. տոննա, ինչը կազմել է 2009 թ. 47.8%-ը, իսկ արժեքային արտահայտությամբ, 2009 թ. համեմատությամբ նվազելով 4.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 48.5%-ով, 2018 թ. կազմել է 4.4 մլն ԱՄՆ դոլար, ինչի արդյունքում դրանց մասնաբաժինը ընդհանուր ամրանների ներմուծման մեջ, բնաիրային արտահայտությամբ, կազմել է 12.4%, իսկ արժեքային արտահայտությամբ՝ 12.6%:

2019–2023 թթ. ժամանակահատվածի բոլոր տարիներին «7213 - Ձողեր տաք գլանված երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների ներմուծման ծավալներում արձանագրվել են կայուն աճի միտումներ, ինչի արդյունքում 2020 թ. բնաիրային (13.5 հազ. տոննա), իսկ արժեքային արտահայտությամբ՝ 2021 թ. (11.5 մլն ԱՄՆ դոլար) ներմուծման ծավալներով գերազանցեցին 2008 թ. մակարդակը: 2020 թ. համեմատությամբ, բնաիրային արտահայտությամբ, ներմուծման ծավալները 2021, 2022 և 2023 թթ. համապատասխանաբար ավելանալով 28.7, 78.5%-ով և 2.4 անգամ, կազմել են 17.4, 24.2 և 32.7 հազ. տոննա, իսկ արժեքային արտահայտությամբ 2021 թ. համեմատությամբ 2002 և 2023 թթ. ավելանալով համապատասխանաբար՝ 41.2 և

62.3%-ով, կազմել են 16.2 և 18.7 մլն ԱՄՆ դոլար: Վերջին տարիներին (2019–2023 թթ.), ամրանների այս տեսակի ներմուծման ծավալների աճի միտումների արդյունքում, դրանց մասնաբաժինը ընդհանուր ներմուծված ամրանների մեջ 2018 թ. համեմատությամբ, բնաիրային արտահայտությամբ, ավելանալով 4.5 տոկոսային կետով, 2023 թ. կազմել է 16.9%, իսկ արժեքային արտահայտությամբ ավելացել է 4.6 տոկոսային կետով և կազմել 17.2%:



Գծապատկեր 3. ***«7213 - Ձողեր փաք գլանված երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների ներմուծման ծավալների շարժընթացը ՀՀ-ում***[8]

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (2002–2023 թթ.) մետաղական ամրանների ներմուծման ծավալներում ամենափոքր մասնաբաժինը կազմող «7215 - Ձողեր այլ երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների ներմուծման ծավալների շարժընթացում արձանագրված միտումները տարբերվել են մետաղական ամրանների մյուս երկու ապրանքային տեսակների ներմուծման միտումներից: Մասնավորապես՝ 2002–2007 թթ. ներմուծման ծավալները տատանումներով աճելով՝ 2007 թ. բնաիրային արտահայտությամբ կազմել են 1,6 հազ. տոննա՝ 2002 թ. մակարդակը գերազանցելով 7.6 անգամ, իսկ արժեքային արտահայտությամբ 2002 թ. մակարդակը գերազանցելով 14.0 անգամ՝ 2007 թ. կազմել 1.2 մլն ԱՄՆ դոլար:

Այնուհետև «7215 - Ձողեր այլ երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների ներմուծման ծավալներում ինչպես բնաիրային, այնպես էլ արժեքային արտահայտությամբ 2008–2012 թթ., 2016–2017 թթ. և 2020–2023 թթ. արձանագրվել են նվազման միտումներ, իսկ 2013–2015 թթ. և 2018–2017 թթ.՝ աճի միտումներ: Մասնավորապես՝ 2007 թ. համեմատությամբ 2012 թ. ներմուծման ծավալները բնաիրային արտահայտությամբ նվազելով շուրջ 50.0%-ով՝ կազմել են 0.8 հազ. տոննա, իսկ արժեքային արտահայտությամբ նվազելով 37.0%-ով՝ կազմել շուրջ 0.8 մլն ԱՄՆ դոլար:

---

[8] Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Մաքսային վիճակագրություն, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128, հեղինակային հաշվարկներ՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003–2023 թթ.» վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:



Գծապատկեր 4. ***«7215 - Ձողեր այլ երկաթից կամ չորակավորած պողպատից»* տեսակի ամրանների ներմուծման ծավալների շարժընթացը ՀՀ-ում**[9]

2013–2015 թթ. ներմուծման ծավալներն աճելով՝ 2015 թ. բնաիրային արտահայտությամբ կազմել են շուրջ 2.2 հազ. տոննա, իսկ արժեքային արտահայտությամբ՝ ավելի քան 1.4 մլն ԱՄՆ դոլար, այնուհետև, 2015 թ. համեմատությամբ նվազելով 30.5%-ով, 2017 թ. կազմել են շուրջ 1.3 հազ. տոննա, իսկ արժեքային արտահայտությամբ նվազելով 28.6%-ով՝ կազմել ավելի քան 1.0 մլն ԱՄՆ դոլար:

2018–2019 թթ. համարվում են ուսումնասիրվող ժամանակաշրջանի (2002–2023 թթ.) ընթացքում «7215 - Ձողեր այլ երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների ամենաշատ ներմուծման տարիներ, քանի որ 2018 թ. բնաիրային արտահայտությամբ ներմուծվել է շուրջ 6.2 հազ. տոննա, ինչը կազմել է ներմուծված ընդհանուր ամրանների 10.2%-ը, իսկ արժեքային արտահայտությամբ ներմուծվել է ավելի քան 3.5 մլն ԱՄՆ դոլարի ապրանք՝ կազմելով ներմուծված ընդհանուր ամրանների 10.1%-ը:

2020–2023 թթ. ժամանակահատվածի տարիներին այս տեսակի ամրանների ներմուծման ծավալներում արձանագրվել են կտրուկ նվազման միտումներ՝ 2023 թ. բնաիրային արտահայտությամբ կազմելով 0.6 հազ. տոննա, իսկ արժեքային արտահայտությամբ՝ 0.3 մլն ԱՄՆ դոլար: 2020–2023 թթ. նշված տեսակի ամրանների ներմուծման ծավալներն ինչպես բնաիրային, այնպես էլ արժեքային արտահայտությամբ գրեթե հավասար են եղել 2003–2006 թթ. ներմուծման ծավալներին:

Սույն հետազոտության շրջանակներում կարևորվում է նաև մետաղական ամրանների ներմուծման ծավալների և կառուցվածքի շարժընթացի վերլուծությունը՝ ըստ գործընկեր երկրների:

---

[9] Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Մաքսային վիճակագրություն, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128, հեղինակային հաշվարկներ՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003–2023 թթ.» վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:



Գծապատկեր 5. ***«7214 - Ձողեր երկաթից կամ չորակավորած պողպատից տաք գլանված՝ առանց հետագա մշակման» տեսակի ամրանների ներմուծման մասնաբաժինների (բնաիրային արտահայտությամբ) շարժընթացն ըստ երկրների***[10]

Գծապատկեր 5-ից պարզ է դառնում, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում (2002–2023 թթ.) մետաղական ամրանների ներմուծման ծավալներում ամենամեծ մասնաբաժինն ունեցող «7214 - Ձողեր երկաթից կամ չորակավորած պողպատից տաք գլանված՝ առանց հետագա մշակման» տեսակի ամրանների՝ բնաիրային արտահայտությամբ ներմուծման կառուցվածքն ըստ երկրների բավականին կենտրոնացված է:

Այսպես՝ 2002–2016 թթ., բացառությամբ 2003–2005 թթ., ներմուծման 50%-ը և ավելին բաժին է ընկել Ուկրաինային, ընդ որում, 2002 թ. մինչև 2015 թ.՝ 73%-ը և ավելին, իսկ 2003, 2004 և 2005 թթ. ներմուծման ծավալների մասնաբաժինները կազմել են համապատասխանաբար՝ 18.8, 18.6 և 4.4%: 2003–2005 թթ. ամրանների ներմուծման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են ունեցել Շվեյցարիայից, Կիպրոսից, Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից և ԱՄԷ-ից ներմուծված ամրանների մասնաբաժինները: Այսպես՝ Շվեյցարիայից ամրանների ներմուծումը 2003, 2004 և 2005 թթ. կազմել է համապատասխանաբար՝ 39.0, 32.1 և 46.6%, Կիպրոսից ներմուծում իրականացվել է միայն 2003 թ.՝ 37.6%, Մեծ Բրիտանիայից 2004 թ.՝ 29.9%, ԱՄՆ-ից և ԱՄԷ-ից 2005 թ. համապատասխանաբար՝ 17.3 և 23.5%[11]:

Հարկ ենք համարում նշել, որ 2002–2023 թթ., բացառությամբ 2003–2005 թթ., վերը նշված երկրներից այլևս այս տեսակի ամրաններ ՀՀ չեն ներմուծվել:

---

[10] Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Մաքսային վիճակագրություն, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128, հեղինակային հաշվարկներ՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003-2023 թթ.» վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

[11] Աղբյուրը՝ UN Comtrade, https://comtradeplus.un.org/TradeFlow?Frequency=A&Flows=X&CommodityCodes=TOTAL&Partners=0&Reporters=all&period=2023&AggregateBy=none&BreakdownMode=plus

2010–2013 թթ. ժամանակահատվածում նշված տեսակի ամրանների ներմուծման 16–26%-ը բաժին է ընկել Վրաստանին՝ համապատասխանաբար՝ 18.8, 25.5, 16.1 և 22.7%:

2017–2023 թթ. տեղի է ունեցել ամրանների այս տեսակի առևտրային հիմնական գործընկեր երկրի (2017–2020 թթ.՝ ՌԴ, 2021–2023 թթ.՝ ԻԻՀ) փոփոխություն, մասնավորապես՝ 2017 թ., 2016 թ. համեմատությամբ, Ուկրաինայի մասնաբաժինը ներմուծման կառուցվածքում նվազել է 47.7 տոկոսային կետով և կազմել 2.9%՝ առաջատարի դիրքերը զիջելով ՌԴ-ին (77.6%): ՌԴ-ն հիմնական առևտրային գործընկերոջ կարգավիճակը պահպանել է նաև 2018, 2019 և 2020 թվականներին. ներմուծման մասնաբաժինները կազմել են համապատասխանաբար՝ 90,4, 50.6 և 71.3%: Ընդ որում, ՌԴ-ից ամրանների ներմուծման ծավալների աճ սկսել է արձանագրվել 2015 թ.՝ ներմուծման մեջ կազմելով 23.7%, իսկ 2016 թ.՝ 47.5%:

2021–2023 թթ. ամրանների ներմուծման 65–83%-ը բաժին է ընկել ԻԻՀ-ին, մասնավորապես՝ 2021 թ.՝ 65.0%, իսկ ՌԴ ներմուծման մասնաբաժինը 2020 թ. համեմատությամբ նվազելով 48.0 տոկոսային կետով՝ 2021 թ. կազմել է 23.3%: Հաջորդ երկու տարիներին՝ 2022 և 2023 թթ., ԻԻՀ-ից մասնաբաժինները ներմուծման կառուցվածքում շարունակել են աճել՝ կազմելով համապատասխանաբար՝ 71.8 և 82. 9%:

Չնայած 2021–2023 թթ. ամրանների այս տեսակի ներմուծման կառուցվածքում ՌԴ մասնաբաժնում արձանագրվել են նվազման միտումներ, այնուամենայնիվ, բացարձակ արտահայտությամբ, դիտվել են աճի միտումներ, մասնավորապես՝ 2022 թ., 2021 թ. համեմատությամբ, աճել են 4.2 հազ. տոննայով, 2023 թ., 2022 թ. համեմատությամբ՝ 12.3 հազ. տոննայով, ինչը պայմանավորված է եղել ԻԻՀ-ից ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով:



Գծապատկեր 6. ***«7213 - Ձողեր տաք գլանված երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների ներմուծման մասնաբաժինների (բնաիրային արտահայտությամբ) շարժընթացն ըստ երկրների***[12]

[12] Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Մաքսային վիճակագրություն, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128, հեղինակային հաշվարկներ՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003–2023 թթ.», վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

Դիտարկվող ժամանակաշրջանում (2002–2023 թթ.) մետաղական ամրանների ներմուծման ծավալներում մեծությամբ երկրորդ՝ «7213 - Ձողեր տաք գլանված երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների մասով արտաքին առևտրի հիմնական գործընկերները նույնպես երեքն են (Ուկրաինա, ՌԴ և ԻԻՀ)՝ տարբեր կառուցվածքներով առաջատարի գրեթե նույն ժամանակահատվածներով:

Այսպես՝ 2002–2016 թթ. ժամանակահատվածում (բացառությամբ 2003–2005 թթ.) Ուկրաինայից ներմուծված այս տեսակի ամրանների կառուցվածքը, բացառությամբ 2016 թ. (69.3%), տատանվել է 92–100%-ի միջակայքում, իսկ 2003–2005 թթ. ՀՀ այս տեսակի ամրաններ են ներմուծվել Շվեյցարիայից (2003 թ.՝ 31.0%, 2004 թ.՝ 32.6%, 2005 թ.՝ 25.7%), Կիպրոսից (2003 թ.՝ 33.6%, 2004 թ.՝ 17.4%), Մեծ Բրիտանիայից (2004 թ.՝ 37.5%), ԱՄՆ-ից (2005 թ.՝ 15.9%), ԱՄԷ-ից (2005 թ.՝ 50.0%)[13]: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հետագա տարիներին այս երկրներից ամրաններ այլևս չեն ներմուծվել:

Ուկրաինայից ներմուծման ծավալները 2017 թ., 2016 թ. (69.3%) համեմատությամբ, նվազել են 60.6 տոկոսային կետով և կազմել 8.7%, ինչի հետևանքով միանգամից առաջատարի դիրքերն անցել են ՌԴ-ին, որտեղից 2017–2018 թթ. և 2020 թ. ներմուծվել է համապատասխանաբար՝ 86.0, 97.9 և 55,0%, իսկ 2019 թ. ներմուծման մասնաբաժինը կազմել է 16.7%:

2019 թ. ամրանների ներմուծման գործընկերների շարքը սկսել է համալրել ԻԻՀ-ն. ներմուծման մասնաբաժինը 2019 թ. և 2020 թ. կազմել է համապատասխանաբար՝ 82.1 և 40.6%, իսկ 2021–2023 թթ., լինելով առաջատարը, ներմուծման ծավալները տատանվել են 89.4–97.2 տոկոսային միջակայքում:

Հարկ ենք համարում ընդգծել, որ Ուկրաինան 2018 թ-ից ինչպես «7214 - Ձողեր երկաթից կամ չորակավորած պողպատից տաք գլանված՝ առանց հետագա մշակման», այնպես էլ «7213 - Ձողեր տաք գլանված երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների ներմուծման գծով չի հանդիսացել առևտրային գործընկեր:

Հետազոտության շրջանակներում շինանյութի արտաքին առևտրի նպատակով նույնականացված մետաղական ամրանների երրորդ՝ «7215 - Ձողեր այլ երկաթից կամ չորակավորած պողպատից» ենթախմբի ապրանքների արտաքին առևտրի հիմնական գործընկեր են հանդիսացել ԻԻՀ-ն և Թուրքիան, որոնց մասնաբաժինը ամրանների ներմուծման մեջ, միասին վերցրած, դիտարկվող ողջ ժամանակաշրջանում (բացառությամբ 2022 թ. (3.8%), երբ ներմուծման 96,2%-ը բաժին է ընկել Վրաստանին[14]) գերազանցել է 50%-ը:

Այսպես՝ 2004–2017 թթ. ժամանակահատվածում այս տեսակի ամենաշատ ամրան, բնաիրային արտահայտությամբ, ներմուծվել է Թուրքիայից. ներմուծման մասնաբաժինը տատանվել է 36.0–75.2 տոկոսային միջակայքում, իսկ ԻԻՀ-ից՝ 6.1–48.8 տոկոսային միջակայքում:

---

[13] Աղբյուրը՝ UN Comtrade, https://comtradeplus.un.org/TradeFlow?Frequency=A&Flows=X&CommodityCodes=TOTAL&Partners=0&Reporters=all&period=2023&AggregateBy=none&BreakdownMode=plus

[14] Տե՛ս նույն աղբյուրը:



Գծապատկեր 7. ***«7215 - Ձողեր այլ երկաթից կամ չորակավորած պողպատից» տեսակի ամրանների ներմուծման մասնաբաժինների (բնաիրային արտահայտությամբ) շարժընթացն ըստ երկրների***[15]

2018–2023 թթ. ժամանակահատվածում (բացառությամբ 2020 թ.՝ 43.8%) ընդգծված առաջատար է համարվել ԻԻՀ-ն, ներմուծման մասնաբաժինները կազմել են համապատասխանաբար՝ 89.1, 83.0, 96.4, 68.3 և 77.4%:

Հարկ ենք համարում նշել, որ ամրանների այս տեսակի ներմուծման կառուցվածքային տեղաշարժերը հիմնական և այլ գործընկեր երկրների միջև պայմանավորված են եղել ներմուծված ընդհանուր ամրանների մեջ փոքր տեսակարար կշռով, հետևաբար՝ մեկանգամյա գործարքների արդյունքում արձանագրվել են կառուցվածքային նման տեղաշարժեր:



Գծապատկեր 8. ***2022–2023 թթ. ԱՏԳԱԱ 7214 դասակարգչով ապրանքային դիրք ունեցող ապրանքներ, այդ թվում՝ մետաղական ամրաններ ներկրած տնտեսավարող սուբյեկտների թիվը***[16]

[15] Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Մաքսային վիճակագրություն, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128, հեղինակային հաշվարկներ՝ ՀՀ ՎԿ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2003–2023 թթ.» վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

[16] Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ:

Համաձայն Պետական եկամուտների կոմիտեի տվյալների՝ 2023 թվականին աճել է ինչպես ԱՏԳԱԱ 7214 դասակարգչով բոլոր ապրանքների, այնպես էլ մետաղական ամրանների ներմուծումներ իրականացրած տնտեսավարող սուբյեկտների թիվը:

Ըստ գծապատկեր 8-ի՝ 2023 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, ըստ էության նույնչափ՝ շուրջ 16%-ով, աճել է և՛ ԱՏԳԱԱ 7214 դասակարգչով ապրանքների, և՛ տվյալ դասակարգչի ներքո որոշակի մետաղական ամրաններ ներմուծած տնտեսավարող սուբյեկտների թիվը: Մասնավորապես՝ 2023 թ. նշված 242 տնտեսավարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել, ընդհանուր առմամբ, 160 766 տոննա մետաղական ամրան, ինչը շուրջ 1.4 անգամ ավելի է նախորդ տարվա ներմուծման ցուցանիշից:



Գծապատկեր 9. ***2022–2023 թթ. մետաղական ամրանների ներմուծման ծավալները բնեղեն արտահայտությամբ (տոննա)***[17]

Այժմ ներկայացնենք 2022–2023 թթ. մետաղական ամրանների ներմուծումներ իրականացրած տնտեսավարող սուբյեկտների կազմը և կառուցվածքային տեղաշարժերը:

Աղյուսակ 1

2022–2023 թթ. մետաղական ամրաններ ներմուծող տնտեսավարող սուբյեկտների կազմը և տեսակարար կշիռը ներմուծման ընդհանուր ծավալում[18]

Հ/Հ	2022 թ.			2023 թ.		
	Տնտեսավարող սուբյեկտ	Ներմուծման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ (%)	Տնտեսավարող սուբյեկտ	Ներմուծման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ (%)
1	«Գ» ընկերություն	24414.5	20.9%	«Գ» ընկերություն	39947.9	24.8%
2	«Դ» ընկերություն	19993.6	17.2%	«Դ» ընկերություն	30006.6	18.7%
3	«Ի» ընկերություն	16699.8	14.3%	«Ե» ընկերություն	6243.6	3.9%
4	«Զ» ընկերություն	5859.4	5.0%	«Զ» ընկերություն	5690.1	3.5%
5	«Թ» ընկերություն	4202.0	3.6%	«Լ» ընկերություն	5121.0	3.2%
6	«Ը» ընկերություն	3569.9	3.1%	«Է» ընկերություն	4347.2	2.7%
7	«Ժ» ընկերություն	3417.6	2.9%	«Ո» ընկերություն	3260.0	2.0%
8	«Լ» ընկերություն	2678.2	2.3%	«Ը» ընկերություն	2903.9	1.8%
9	«Ձ» ընկերություն	1929.2	1.7%	«Խ» ընկերություն	2439.4	1.5%
10	«Ղ» ընկերություն	1817.6	1.6%	«Ծ» ընկերություն	2128.9	1.3%
11	Այլ 199 տնտես. սուբյեկտներ	31983.9	27.4%	Այլ 232 տնտես. սուբյեկտներ	58677.3	36.5%
Ընդամենը		**116565.8**	**100.0%**	**Ընդամենը**	**160765.9**	**100%**

[17] Նույն աղբյուրը:

[18] Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ և հեղինակների հաշվարկներ:

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ մետաղական ամրանների շուկայում 2022–2023 թվականներին բացարձակ առաջատար են եղել «Գ» և «Դ» ընկերությունները, որոնց շուկայական համատեղ մասնաբաժինները ներմուծման ընդհանուր ծավալում կազմել են համապատասխանաբար՝ 38.1% և 43.5%: 2022 թ. երրորդ խոշոր «Ի» ընկերության մասնաբաժինն ընդամենը 2.9 տոկոսային կետով է զիջել երկրորդ խոշոր «Դ» ընկերության մասնաբաժնին, սակայն 2023 թվականին «Ի» ընկերությունը չի ընդգրկվել նույնիսկ առաջին 10 խոշոր ներմուծումներ իրականացրած տնտեսավարող սուբյեկտների շարքում: 2023 թ. երրորդ խոշոր ընկերությունը «Ե»-ն է, սակայն վերջինի մասնաբաժինը շուրջ 15%-ով զիջում է երկրորդ խոշոր ընկերության մասնաբաժնին: Չորրորդ խոշոր տնտեսավարող սուբյեկտի մասնաբաժինը տատանվել է 3.5–5 տոկոսի միջակայքում:

2023 թվականին, 2022 թ. համեմատությամբ, առաջին երկու խոշոր տնտեսավարող սուբյեկտների փոփոխություն տեղի չի ունեցել, դրանց հաջորդող երրորդ տնտեսավարող սուբյեկտը 2022 թվականին ունեցել է շուրջ 14% մասնաբաժին, որը 2023 թվականին իրականացրել է ընդամենը շուրջ 700 տոննա (ներմուծման ընդհանուր ծավալում շուրջ 0.5%) ներմուծում՝ չընդգրկվելով 2023 թվականի առաջին 10 խոշոր ներմուծումներ իրականացրած սուբյեկտների շարքում: 2023 թվականին երրորդ խոշոր սուբյեկտն ունեցել է 3.9% մասնաբաժին:

Այսպիսով՝ 2023 թվականին «Գ» և «Դ» ընկերությունները ներմուծման մասով շուկայի հիմնական դերակատարներն են, որոնց վարքագիծն էլ պայմանավորում է շուկայում տեղի ունեցող տատանումները:

Ինչ վերաբերում է մետաղական ամրանների արտադրությանը, ապա, ինչպես արդեն նշել ենք, 2023 թվականին ՀՀ-ում արտադրվել և իրացվել է 104,9 հազ. տոննա մետաղական ամրան, որը 1.2 անգամ գերազանցում է նախորդ տարվա համանուն ցուցանիշը: Ընդ որում, համաձայն իրականացված ուսումնասիրությունների՝ ՀՀ-ում մետաղական ամրանների արտադրություն իրականացնում է մեկ ընկերություն՝ «Ասկե Գրուպ» բաց բաժնետիրական ընկերությունը[19]:

Եթե դիտարկենք մետաղական ամրանների ներմուծում/արտադրություն հարաբերակցությունը, ապա կարող ենք նշել, որ ՀՀ-ում, դիտարկվող ժամանակահատվածում, ներմուծման ընդհանուր ծավալները գերազանցել են արտադրության ծավալները. 2022 թվականին՝ շուրջ 1.3 անգամ, 2023 թվականին՝ շուրջ 1.5 անգամ:

Անդրադառնալով մետաղական ամրանների իրացմանը՝ նշենք, որ չնայած 2023 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, շուրջ 16 հազ. տոննայով աճել են մետաղական ամրանների արտադրության ծավալները՝ 2023 թվականին մետաղական ամրանների իրացման շուրջ 61%-ն ապահովվել է ներմուծման հաշվին:

[19] Տե՛ս https://www.asce.am/





Գծապատկեր 10. ***2022–2023 թթ.մետաղական ամրանների իրացման կառուցվածքը (%)***[20]

2022–2023 թվականներին մետաղական ամրանների իրացման ծավալները[21], ըստ տնտեսավարող սուբյեկտների, ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

2022 –2023 թթ. մետաղական ամրանների իրացման ծավալները[22]՝ ըստ տնտեսավարող սուբյեկտների

	2022 թ.			2023 թ.		
Հ/Հ	Տնտեսավարող սուբյեկտ	Իրացման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ (%)	Տնտեսավարող սուբյեկտ	Իրացման ծավալ (տոննա)	Տեսակարար կշիռ (%)
1	«Ասկե Գրուպ» ԲԲ ընկերություն	88,758	41.6%	«Ասկե Գրուպ» ԲԲ ընկերություն	104,900	38.7%
2	«Գ» ընկերություն	24,145	11.3%	«Գ» ընկերություն	38,679	14.3%
3	«Դ» ընկերություն	20,065	9.4%	«Դ» ընկերություն	29,224	10.8%
4	«Զ» ընկերություն	16,903	7.9%	«Զ» ընկերություն	20,402	7.5%
5	«Ի» ընկերություն	16,699	7.8%	«Ե» ընկերություն	5,413	2.0%
6	«Թ» ընկերություն	4,223	2.0%	«Է» ընկերություն	4,231	1.6%
7	«Ը» ընկերություն	3,494	1.64%	«Ո» ընկերություն	3,659	1.3%
8	«Ժ» ընկերություն	3,418	1.60%	«Ը» ընկերություն	3,371	1.2%
9	«Ձ» ընկերություն	1,929	0.90%	«Խ» ընկերություն	2,527	0.9%
10	«Ղ» ընկերություն	1,818	0.85%	«Ծ» ընկերություն	1,925	0.7%
11	Այլ 200 տնտես. սուբյեկտներ	32,072	15.0%	Այլ 233 տնտես. սուբյեկտներ	56,837	21.0%
Ընդամենը		**213,524**	**100.0%**	**Ընդամենը**	**271,168**	**100.0%**

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, դիտարկվող ժամանակահատվածում մետաղական ամրանների իրացման ծավալում առաջատարը տեղական արտադրողն է, որի մասնաբաժինը 2023 թվականին 3%-ով նվազել է: Արտադ-

[20] Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ և հեղինակների հաշվարկներ:

[21] Հարկ է նշել, որ իրացման ծավալներում կարող են լինել կրկնահաշվարկներ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ որոշ ընկերություններ ունեցել են նաև ՀՀ տարածքում մետաղական ամրանների ձեռքբերումներ: Դրանք հնարավոր չի եղել զտել, քանի որ ոչ բոլոր սուբյեկտների մասով է ձեռքբերման ծավալների մասին տեղեկատվություն եղել:

[22] «Ասկե Գրուպ» ԲԲ ընկերության մասով 2022–2023 թթ. արտադրության և իրացման ծավալները նույնացվել են: Աղբյուրը՝ ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ և հեղինակների հաշվարկներ:

րողին հաջորդում են խոշոր ներմուծողները՝ «Գ» և «Դ» ընկերությունները, որոնց մասնաբաժինները 2023 թվականին փոքր-ինչ աճել են: Դիտարկվող ժամանակահատվածում չորրորդը «Զ» ընկերությունն է՝ 2023 թվականին 7.5% մասնաբաժնով, որին հաջորդող ընկերության մասնաբաժինը 2023 թվականին արդեն ընդամենը 2.2% է: 2022 թվականին «Զ» ընկերությանը հաջորդող և վերջինին ընդամենը 0.1 տոկոսային կետով զիջող «Ի» ընկերությունը 2023 թվականին նույնիսկ չի ընդգրկվել առաջին 11 խոշոր իրացնողների շարքում:

Այսպիսով՝ դիտարկվող ժամանակահատվածում «Ասկե Գրուպ» ԲԲ ընկերությունը շուկայի առաջատարն է, որը, ըստ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, համարվում է նաև շուկայում գերիշխող դիրք ունեցող: Ներմուծողների շարքում որոշակի էական դերակատարություն ունեն «Գ» և «Դ» ընկերությունները, իսկ եթե «Գ» ընկերության իրացման ծավալները դիտարկենք արտադրողի ծավալների հետ միասին, ապա «Գ» ընկերությունը ևս կունենա գերիշխող դիրք:

ՀՀ մետաղական ամրանների շուկայի վերը քննարկված կառուցվածքային փոփոխությունների արդյունքներն առավել ճշգրիտ գնահատելու համար հաշվարկվել է նաև «մետաղական ամրաններ» ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը առավել լայն տարածում ունեցող ինդեքսների միջոցով:

Գնահատվել է շուկայի կենտրոնացվածության աստիճանը շուկայում իրացման առավել խոշոր մասնաբաժիններ ունեցող 3 ընկերությունների մասնաբաժինների հիման վրա CR-3 (Concentration Ratio).

$$CR_3=S_1+S_2+S_3,$$

որտեղ՝ S_1-ը, S_2-ը և S_3-ը շուկայում ամենամեծ մասնաբաժին ունեցող համապատասխանաբար՝ առաջին, երկրորդ և երրորդ տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժիններն են:

Տվյալ դեպքում շուկան համարվում է կենտրոնացվածության միջին աստիճան ունեցող, քանի որ իրականացված հաշվարկների համաձայն՝

- 2022 թվականի ընթացքում CR3-ը, ըստ ապրանքային շուկայի իրացման ծավալների, կազմել է 62.3%:
- 2023 թվականի ընթացքում CR3-ը, ըստ ապրանքային շուկայի իրացման ծավալների, կազմել է 63.6%:

Հաշվարկվել է նաև Հերֆինդալ-Հիրշմանի (HHI) ինդեքսը, որը շուկայում գործող բոլոր ընկերությունների մասնաբաժինների քառակուսիների հանրագումարն է.

$$HHI =S_1^2+S_2^2+S_3^2+...+ S_n^2$$

Համաձայն կատարված հաշվարկների՝ 2022 թվականին շուկան համարվել է կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող՝

- 2022 թվականի ընթացքում HHI-ն, ըստ իրացման, կազմել է 2084, իսկ 2023 թվականին՝ կենտրոնացվածության միջին աստիճան ունեցող շուկա:
- 2023 թվականի ընթացքում HHI-ն, ըստ իրացման, կազմել է 1893:

Հարկ է նշել, որ չնայած 2022 թվականին շուկան եղել է բարձր կենտրոնացված, այդուհանդերձ, ցուցանիշը շատ աննշան է բարձր եղել այն շեմային ցուցանիշից, որը գերազանցելու դեպքում շուկան սկսում է համարվել բարձր

կենտրոնացված: 2023 թվականին շուկայի կենտրոնացվածության աստիճանը նվազել է, ինչը, կարծում ենք, կարող է պայմանավորված լինել տեղական արտադրողի մասնաբաժնի նվազման հանգամանքով:

Եզրակացություն: Հայաստանի Հանրապետությունում շինանյութերի, մասնավորապես՝ մետաղական ամրանների ներմուծումը կազմում է շինարարական ոլորտի կայուն զարգացման և շուկայի կարիքների բավարարման կարևոր բաղադրիչներից մեկը: Վերլուծությունից պարզ է դառնում, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ինչպես բնաիրային, այնպես էլ արժեքային արտահայտությամբ, մետաղական ամրանների ներմուծման ծավալներում արձանագրված միտումները, ընդհանուր առմամբ, համընկնում են բնակելի շենքերի գործարկման ծավալների հետ: Այսպես՝ 2002–2008 թթ. բոլոր տարիներին, արժեքային արտահայտությամբ, մետաղական ամրանների ներմուծման ծավալների աճի տեմպերը գերազանցել են բնաիրային արտահայտությամբ աճի տեմպերը, ինչը պայմանավորված է եղել գների առաջանցիկ աճի տեմպերով: 2009 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով բնակարանաշինարարության ծավալների անկումը հանգեցրել է մետաղական ամրանների ներմուծման ծավալների նվազման: 2017–2023 թթ. բնակելի շենքերի գործարկման ծավալներին զուգընթաց, մետաղական ամրանների ներմուծման ծավալները բոլոր տարիներին ինչպես բնաիրային, այնպես էլ արժեքային արտահայտությամբ կրկին ավելացել են: 2002–2013 թթ. ժամանակահատվածում, բնաիրային արտահայտությամբ, մետաղական ամրանների երեք ենթախմբի ապրանքների ներմուծման միասնական մասնաբաժինը գերազանցել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքային բաժնի ապրանքների ներմուծման 50%-ը, իսկ արժեքային արտահայտությամբ՝ 30%-ը: 2014–2021 թթ. մետաղական ամրանների ներմուծման ծավալների տեսակարար կշիռներն իրենց ապրանքային բաժնի շինանյութի ներմուծման մեջ ինչպես բնաիրային, այնպես էլ արժեքային արտահայտությամբ նվազել են: Հետագա երկու տարիներին մետաղական ամրանների ներմուծման մասնաբաժիններում արձանագրված աճի միտումների արդյունքում վերականգնվել են 2000-ականների մակարդակները՝ 2023 թ. բնաիրային արտահայտությամբ կազմելով 58.0%, իսկ արժեքային արտահայտությամբ՝ 33.3%:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մետաղական ամրանների ներմուծման աշխարհագրությունը բավականաչափ կենտրոնացված է: Մասնավորապես՝ 2002–2016 թթ. (բացառությամբ 2003–2005 թթ.) Ուկրաինան ամրանների ներմուծման ծավալներում ամենամեծ մասնաբաժինն (60–75%) ունեցող՝ «7214 - Ձողեր երկաթից կամ չորակավորած պողպատից տաք գլանված՝ առանց հետագա մշակման» տեսակի ամրանների հիմնական առևտրային գործընկերոջ կարգավիճակը զիջել է ՌԴ-ին (2017–2020 թթ.), իսկ վերջինս էլ՝ ԻԻՀ-ին, որին բաժին է ընկնում ամրանների այս տեսակի ներմուծման շուրջ 83%-ը:

Ինչ վերաբերում է ներմուծող և արտադրող ընկերություններին, ապա 2022–2023 թթ. մետաղական ամրանների շուկայում գործել են մեկ տեղական արտադրող և բազմաթիվ ներմուծող տնտեսավարող սուբյեկտներ, ընդ որում,

ՀՀ-ում մետաղական ամրանների իրացման 38–41%-ն ապահովվել է արտադրության հաշվին: Դիտարկված ժամանակահատվածում ներմուծողների թիվն աճել է, ինչը կարող է վկայել շուկա մուտքի արգելքների բացակայության մասին: Սակայն, միևնույն ժամանակ, ներմուծող ընկերությունների թվի աճը հիմնականում էական ազդեցություն չի ունեցել առավել խոշոր ծավալներ ունեցող տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինների վրա:

Շուկայի կառուցվածքային տեղաշարժերի և տնտեսավարող սուբյեկտների համամասնությունների վերաբաշխման վերաբերյալ առավել ճշգրիտ պատկեր հնարավոր է եղել ստանալ որոշ ինդեքսների միջոցով հաշվարկված ցուցանիշների հիման վրա: Մասնավորապես՝ CR-3 ինդեքսի միջոցով հաշվարկված կենտրոնացվածության ցուցանիշը բարձր չէ, սակայն մոտ է բարձր մակարդակի ստորին շեմին (70%), և շուկան ունեցել է միջին կենտրոնացվածություն, ինչը, ըստ էության, հաստատվել է նաև 2023 թ. համար հաշվարկված Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսով: Շուկան 2022 թ. եղել է բարձր կենտրոնացված, սակայն ցուցանիշը շատ մոտ է եղել բարձր մակարդակի ստորին շեմին (2000): Կենտրոնացվածության միջին աստիճանը, ըստ էության, պայմանավորված է շուկայում գործող բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտների առկայությամբ, սակայն խոշոր տնտեսավարող սուբյեկտների ունեցած մասնաբաժինների տեսանկյունից պատկերը դրական չի կարող համարվել:

Օգտագործված գրականություն

1. Steel Rebar Market Size & Share Analysis - Growth Trends & Forecasts (2024–2029) Source, https://www.mordorintelligence.com/industry-reports/steel-rebar-market https://www.mordorintelligence.com/industry-reports/steel-rebar-market
2. The future skill needs in the construction sector in Armenia, https://www.etf.europa.eu/sites/default/files/2023-02/ETF_Armenia%20construction%20sector_Country%20report_EN.pdf?destination=/taxonomy/term/354/feed%3Fsuccess
3. ՀՀ ՊԵԿ-ի կայքէջ, Մաքսային վիճակագրություն, https://www.src.am/am/customStatisticsPage?id=128
4. UN Comtrade. https://comtradeplus.un.org/TradeFlow?Frequency=A&Flows=X&CommodityCodes=TOTAL&Partners=0&Reporters=all&period=2023&AggregateBy=none&BreakdownMode=plus
5. https://www.asce.am/
6. https://armstat.am/am/
7. https://www.wireclothmesh.com/hy/news/rebar-market-to-be-worth-246-3-billion-by-2028-up-4-4-2/#
8. https://www.investopedia.com/terms/h/hhi.asp
9. http://www.old.ysu.am/files/01A_Muradyan_H_Muradyan.pdf

МАНУК МОВСИСЯН
Доцент кафедры статистики АГЭУ, кандидат экономических наук

ЗАРУИ МЕЛКУМЯН
Доцент кафедры микроэкономики АГЭУ, кандидат экономических наук

АННА АЙВАЗЯН
Ассистент кафедры менеджмента АГЭУ

КРИСТИНА ТОНОЯН
Соискатель кафедры международных экономических отношений АГЭУ

Исследование закономерностей развития рынка металлической арматуры РА.– Статья посвящена комплексному анализу рынка строительных материалов Республики Армения, в частности сектора импорта металлической арматуры. В работе подробно изучены объемы импорта как в стоимостном, так и в натуральном выражении с учетом данных разных лет. В рамках анализа была рассмотрена география импорта, чтобы выяснить, из каких стран в основном осуществляется импорт и как менялось это соотношение с течением времени. Кроме того, в работе было уделено внимание изучению рыночных долей организаций-импортеров с целью выявления основных игроков отрасли и их позиционирования на рынке. Степень концентрации рынка также анализировалась с использованием широко используемых индексов экономического анализа.

Ключевые слова: *металлическая арматура, география импорта, строительство, степень концентрации рынка*
JEL: L11, L17
DOI: 10.52174/29538114_2024.3-102

MANUK MOVSISYAN
Associate Professor of the Chair of Statistics of ASUE, PhD in Economics

ZARUHI MELKUMYAN
Associate Professor of the Chair of Microeconomics of ASUE, PhD in Economics

ANNA AYVAZYAN
Assistant of the Chair of Management of ASUE

KRISTINA TONOYAN
Applicant of the Chair of International Economic Relations of ASUE

Study of the Development Patterns of the Steel Rebar Market in the Republic of Armenia. The article addresses a comprehensive analysis of the construction materials market in the Republic of Armenia, particularly, the import sector of steel rebar. The work

examines in detail the import volumes, both in value and in kind, taking into account data from different years. Within the framework of the analysis, the geography of imports has been considered to determine from which countries imports are mainly carried out and how this ratio has changed over time. In addition, the work focuses on the study of the market shares of importing organizations to identify the main players in the sector and their positioning in the market. The degree of market concentration has also been analyzed using widely used indices of economic analysis. This analysis aims to assess the structure and characteristics of the import market, offering data-based conclusions for the further effective development of the sector.

Keywords: *steel rebar, import geography, construction, degree of market concentration*
JEL: L11, L17
DOI: 10.52174/29538114_2024.3-102